ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվ. ՀՊՄՀ
կերպարվեստի ամբիոնի դասախոս
hdavid83@mail.ru

ՆԿԱՐԻՉ-ՄԱՆԿԱՎԱՐԺ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. ճեպանկար, կատարում, Հարություն Հովհաննիսյան, նկարիչ-մանկավարժ, շարժում, գծանկար, մարդու ֆիգուր, գիծ, ուսանող:

Ключевые слова и выражения: эскиз, перформанс, Арутюн Ованнисян, художник-педагог, движение, рисунок, человеческая фигура, линия, студент.

Key words and expressions: sketch, performance, Harutyun Hovhannisyan, artist-pedagogue, movement, drawing, human figure, line, student.

Կերպարվեստի հիմքը դա գծանկարն է: Առանց գծանկարին վարժ տիրապետման անկարելի է ստեղծել գրագետ աշխատանք: Բոլոր մեծանուն արվեստագետները կարևորել են գծանկարի դերը արվեստում: Համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ, որպես չքնաղ գոհարներ բազմաթիվ են գծանկարների և ճեպանկարների օրինակները:

Վերածննդի տիտաններ Միքելանջելո Բուոնարոտին, Լեոնարդո դա Վինչին, իմպրեսիոնիստներ Էդուարդ Մանեն, Օգյուստ Ռոդենը, Էդգար Դեգան, ավելի ուշ՝ Անրի Մատիսը, Պաբլո Պիկասոն ցանկացած աշխատանք ստեղծելուց առաջ կատարում էին բազմաթիվ նախանկարներ և ճեպանկարներ: Այդ գլուխգործոցները մեծ մասամբ ստեղծվել են տուշի, գրիչի, ածուխի, սանգինայի և այլ նկարչական նյութերի միջոցով:

Դասավանդելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կերպարվեստի ամբիոնում, անմիջապես մտաբերում եմ ֆակուլտետում մանկավարժական գործունեություն ծավալած ավագ սերնդի դասախոսների ուսուցման մեթոդները, նրանց բարի խորհուրդներն՝ առ այն թե ապագա նկարիչ-մանկավարժի համար որքան անհրաժեշտ է ճեպանկարների և նախանկարների կատարումը: Ֆակուլտետի վաթսունամյա պատմության ընթացքում մանկավարժական գործունեությամբ են զբաղվել

Հանրապետությունում ճանաչում գտած մի շարք գրաֆիկներ. Ադամ Մաշինյան (1922-2006), Արտաշես Հունանյան (1922-1993), Վահրամ Խաչիկյան (1923-2002), Լյուդվիգ Բերբերյան (1927-2007), Լիդա Խանամիրյան (1930-2011), Սամվել Բերեքչյան (1940-1998), Ստեփան Գրիգորյան (1940-2010) և ուրիշներ:

Այդ գործի նվիրյալներից էր գրաֆիկայի փայլուն վարպետ Հարություն Մեդրակի Հովհաննիսյանը (1922-1998): Ծնվել է Արմավիրի մարզի Մեծ Շահրիար գյուղում (այժմ՝ գյուղ Նալբանդյան)[1]: 1946 թվականին ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, 1953 թվականին՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գրաֆիկայի բաժինը: 1960-1998 թվականներին դասավանդել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, 1984-1988 թթ.՝ ղեկավարել Գրաֆիկայի և դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Հովհաննիսյանը հիմնականում աշխատել է օֆորտի և վիմագրության տեխնիկայով: Արվեստագետի ստեղծագործություններում գերակշռողը բնանկարն է: Սրանցում նկարիչը մեծ ուշադրություն է դարձնում հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձանների պատկերմանը. մեկ մենավոր՝ հայրենի բնության գրկում, մյուսը ծիսական օրերին՝ շրջապատված մարդկանցով ու աշխույժ զբոսաշրջիկներով: Այդ շարքի լավագույ էջերից են. «Գեղարդ», «Խոր Վիրապ», «Սևանի կղզում», «Անձրևոտ օր Դղերում», «Սուրբ Հռիփսիմե», «Այրիվանք», «Տաթև» ստեղծագործությունները:

Խուսափելով պարզունակ արտահայտչաձևերից արվեստագետը միջնադարյան հուշարձանները կերպավորել է հավերժության գաղափարի խորհրդով: Արվեստաբան Կարեն Միքայելյանը գրում է. «Հարություն Հովհաննիսյանը աշխատում է առանց մանրակրկիտ պլանի. թերթը ծնվում է թերթի հետևից և շարքը ձեռք է բերում նոր գծեր, արտահայտչական նոր ձևեր, որոնց իմաստն առաջին հերթին բովանդակվում է զարգացման շարժընթացում: Նա չի խուսափում բնօրինակի հետ անմիջական հանդիպումից, ավելին. նրա հետ հետևողականորեն և խորազննին աշխատելով՝ մշտապես գտնվում է առաջխաղացման մեջ, ձգտում առանց կանխակալ սխեմաների հասկանալ շրջապատող աշխարհը, այն նախնական ու անսահման բարդությունները, որ այնպես բնորոշ է հայկական բնությանը: Հովհաննիսյանին հաջողվում է իր լավագույն

[1] Ի դեպ, նույն գյուղում է ծնվել ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Նիկոլայ Նիկողոսյանը (1918-2018):

թերթերում արտահայտել մեր երկրի բնությունը, նրա ոգին, նրա հեռավոր, անցած ժամանակների պատմությունը, որը սակայն ընդմիշտ մնացել է այս լեռներում, ճարտարապետական հուշարձաններում, ռելիեֆների զարմանալի ուրվագծերում»[2]:

Հովհաննիսյանը իր երկարամյա գործունեության ընթացքում դաստիարակել է բազմաթիվ նկարիչ-մանկավարժներ, որոնցից շատերը այսօր հանդիսանում են Հանրապետության երևելի արվեստագետներ: Գրաֆիկայի մասնագետն անընծա իր իմացությունները փոխանցել և նվիրաբերել է երիտասարդ սերնդի պատրաստման գործին: Այդ առիթով տեղին է հիշել արվեստաբան Հրավարդ Հակոբյանի խոսքը. «Հովհաննիսյանը ձգտում է ուսանողի մոտ սերմանել նյութի լիակատար ըմբռնում ու կիրառման կարողություն: Այդ ամենին զումարելու ենք նրա ստեղծագործական հարուստ ժառանգությունը, որը Սեմուել Ջոնսոնի խոսքերով ասած «օրինակներն ուսանողի վրա ավելի ուժեղ են ներգործելու, քան քարոզը»: Հովհաննիսյանի արվեստը մարդկային է, հագեցված կենսական լավատեսությամբ, այն խորապես անկեղծ է, դիտողի մոտ առաջացնում է ջերմ ու բարի զգացումներ»[3]:

Հիրավի, այսօր էլ, Մանկավարժական համալսարանի կերպարվեստ բաժնի մասնագիտական դասընթացներում կիրառվում է Հարություն Հովհաննիսյանի դասավանդման մի շարք մեթոդներ:

Կերպարվեստի բազմաթիվ գաղտնիքներին ծանոթացնելուց զատ փորձառու մանկավարժ-գրաֆիկը մեծ ուշադրություն էր դարձնում ճեպանկարների կատարմանը՝ նշելով, որ ուսանողը պետք է գիտակցի, որ մինչ երկարատև գծանկարին անցնելը օգտակար է փոքրաչափ նախանկարների կամ ճեպանկարների կատարումը: Ի վերջո, հաջող ճեպանկարը կարելի է համարել երկարատև գծանկարի սկիզբը:

Այսօր, բազմաթիվ նորարարական ձևերի և բազմաբնույթ տեխնիկական միջոցների ի հայտ գալու հետ մեկտեղ, կերպարվեստում ավելի ընդլայնվեց կատարման եղանակները և ձևերը: Սակայն ակադեմիական գծանկարի դասավանդման գործում պետք է գիտակցել ճեպանկարների կարևորությունը և իմանալ, որ դրանք հիմնականում լինում են գծային, ուրվագծային և տոնային, նայած թե ինչ խնդիր է դրել իր առջև կատարողը:

---

[2] Կ. Միքայելյան, Հարություն Հովհաննիսյան, Ե., Հայաստանի նկարիչների միություն, Հայաստանի նկարչի տուն, 1988, էջ 3:

[3] Г. Акопян, Арутюн Оганесян, М., Изд. Виктор, 1994, ст. 2.

Գծային ճեպանկարներին հատկանշական է ճշգրիտ և դիպուկ գիծը: Այն պետք է արտահայտի բնորդի ողջ էությունը ու շարժումը, լինի պլաստիկ և տարածական: Գիծը պետք է լինի տրամաբանական, ցույց տա բնորդի հատկանշական կողմերը: Որքան ճիշտ է տարված գիծը, այնքան համոզիչ ու կենդանի է դիտվում բնորդը: Գծային ճեպանկարներում կարևոր է ձեռքի շարժումը՝ կանգ չառնել, համարձակ ու վճռական կերպով աշխատանքը ավարտել մեկ գծով: Որոշ դեպքերում վարժ ու կարող ձեռքը ունակ է ճեպանկարը ավարտել հիշողությամբ:

Ուրվագծային գծանկարը կարճատև աշխատանք է, որում ընդհանուր բնորոշմամբ, մեկ գծով արտահայտվում են բնորդի ընդհանրական գծերը: Տվյալ աշխատանքներում, չանդրադառնալով մանրամասնություններին, մատիտը կամ այլ նկարչական նյութը սահուն կերպով ուրվագծում է մարմնի պլաստիկ ձևը՝ դիտողի ուշադրությունը սևեռելով կերպարի բնորոշ գծերին: Նման դեպքում ուրվապատկերի միջոցով կարելի է ճանաչել մեզ ծանոթ մարդուն: Ուրվագծային գծանկարում բնորդի բնորոշ կողմերը շեշտադրելու համար տեղին հատվածներում տարվում են հաստ կամ պինդ գծեր, որոնց նպատակն է ստեղծել տարածության տպավորություն ծավալների միջև:

Տոնային գծանկարների միջոցով հեշտությամբ կարելի է ստանալ ծավալ: Այն ուսանողի մեջ նպաստում է ծավալատարածական խնդիրների լուծմանը: Շատ ժամանակ հանձնարարված առաջադրանքը կարող է հուշել տոնային կատարման անհրաժեշտության մասին:

Ահա՝ հիմնականում այս ուսուցման մեթոդներով էր շարժվում Հարություն Հովհաննիսյանը, ուսանողի մոտ սերմանում, որ ճեպանկարների կատարումը մի շարք օգտակար հանգամանքներից բացի՝ նկարչի մոտ զարգացնում է ճաշակ, գեղարվեստական ընկալում, ընդհանրականը տեսնելու կարողություն ու դրանից գլխավորի տարանջատում: Այն ձևավորում է կերպարային մտածելակերպի զարգացումը, մարդկային մարմնի բնորոշ մասնիկներ տեսնելու ունակություն, միաժամանակ վարժեցնում տեսողական հիշողությունը:

Հենվելով Հովհաննիսյանի և մյուս մեր մեծերի դասավանդման մեթոդներին ու խորհուրդներին այսօր էլ Կերպարվեստ մասնագիտությամբ սովորողներին խրատվում է, որ Ճեպանկարների պարբերաբար կատարումն ապագա նկարիչ-մանկավարժին կսովորեցնի կոմպոզիցիայի, շարժման, ուրվագծի, ռիթմի և մի շարք այլ նրբությունների տիրապետմանը: Ի վերջո, հենց ճեպանկարային էսքիզն է ապագա նկարի հիմնական նախապատրաստական նյութը: Առաջին ճեպանկարների դեպքում

ուսանողը կարող է օգտագործել մատիտ[4], ապա տարբեր նկարչական նյութեր. օրինակ սանգինա, ածուխ, կավճամատիտ, թանաք, միագույն ջրաներկ և այլն: Ճեպանկարների դեպքում կարևոր դեր է կատարում մարդկային ֆիգուրի պատկերումը: Սակայն, մինչ մարդկային ֆիգուրայի գծանկարելը խորհուրդ է տրվում վարժվել պարզ երկրաչափական մարմիններ, կենցաղային առարկաներ և կենդանիներ ճեպանկարելով: Այստեղ դասավանդողը ուսանողներին պարբերաբար պետք է ուղղորդի դեպի կենդանաբանական այգի: Հենց կենդանիների մոտ ավելի ցայտուն են երևում շարժման մեջ գտնվող մարմնի պլաստիկ ձևերը և մկանային համակարգը:

Մասնավորապես բնորդների պատկերման դեպքում կարևոր է մարդկային մարմնի անատոմիական ձևերի ճանաչումը՝ մարդկային կմախքը, ոսկրերը, դրանց համաչափությունները, մկանները և այլն: Հովհաննիսյանը պարբերաբար շեշտում էր, որ սովորողը պետք է ուսումնասիրի պլաստիկ անատոմիայի վերաբերյալ համաշխարհային ներդրում ունեցած հեղինակների աշխատությունները: Այդ առումով՝ մեզանում հետաքրքրական է պրոֆեսոր Արտաշես Քեշիշյանի հեղինակությամբ վերջերս լույս ընծայված մարդու անատոմիայի հարցերի վերաբերյալ հայալեզու աշխատությունը[5]:

Մարդկային մարմնի ճեպանկարներում որպես առաջին հանձնարարական կարող է լինել հագուստով բնորդ[6], կանգնած վիճակում՝ հենված մեկ ոտքի վրա: Այն կօգնի ընկալելու ծանրության կշիռը, ծավալը, շարժումը, մարդկային մարմնի կենտրոնը և մի շարք հանգամանքներ: Կարևոր է հասկանալ, որ ցանկացած դիրքով կանգնած կամ նստած բնորդի մոտ փոփոխվում է մկանային համակարգը: Անգամ հանգիստ վիճակում նստած ֆիգուրի մոտ որոշ մկաններ գտնվում են լարված վիճակում: Ճեպանկարը կենդանի և տպավորիչ դարձնելու համար պետք է ուշադրություն դարձնել գծի և ուրվագծի կատարման կուլտուրայի վրա: Մերկ կամ հագուստով բնորդի ճեպանկարումը կարելի է սկսել և շարունակել ուսուցման առաջին տարվանից մինչ ավարտական կուրսի

[4] Մատիտը գծանկարի հիմնական նյութն է: Ուսուցման սկզբնական շրջանում կարևոր է, որ ուսանողը ծանոթանա մատիտի օգտագործման ձևերին, տարբերակի մատիտի տեսակները և կարող լինի մատիտի միջոցով ստանալ նուրբ կամ կոշտ գիծ՝ հասնելով առարկայի նյութականությանը և ծավալին:

[5] Տե՛ս, Ա. Քեշիշյան, Մարդու պլաստիկ անատոմա, Ե., Տիգրան Մեծ, 2017:

[6] Այս դեպքում հարկավոր չէ մանրանալ հագուստի վրա, պետք է ցույց տալ հագուստի կարևոր ծալքերը, որոնց միջոցով արտահայտվում են բնորդի կառուցվածքը և շարժումը:

վերջը: Վարժ ուսանողը կարող է ճեպանկարը ավարտել մեկ կամ երկու րոպեի ընթացքում՝ չշեղվելով առանձին մասնիկների վրա, ցույց տալով բնորդի կենդանի շարժումը և բնորոշ գծերը[7]: Բնական շարժման մեջ գտնվող բնորդին ճեպանկարելը զարգացնում է տեսողական հիշողությունը և ծավալատարածական մտածելակերպը: Ուսանողի մեջ հաստատվում է արագ աշխատելու կարողություն, որի շնորհիվ հնարավոր է որսալ բնորդի մարմնի տպավորիչ կրճատումները: Նման առաջադրանքների դեպքում վարժվում է ուսանողի նաև ձեռքը և այն դառնում վստահ, իսկ աչքերը՝ ուսումնասիրող և սուր:

Հովհաննիսյանը մեծ կարևորություն էր տալիս բնորդի բնորոշ գծերի որսալուն, պարբերաբար ուսանողներին հիշեցնելով, որ ճեպանկարներում բնորդը պետք է ճանաչվի ոչ թե իր դիմագծերի նմանությամբ, այլ իրեն հատուկ շարժումով, ուրվագծով ու կեցվածքով: Պարբերաբար ճեպանկար կատարած ուսանողը հեշտությամբ կազատվի ավելորդ դետալների պատկերումներից և անմիջապես կորսա բնորդի հատկանշական գծերը:

Ի դեպ, նման վարժությունները օգտակար նպաստ կբերեն նաև բացօդյա աշխատանքներ կատարելուց՝ նկատելու բնության մեջ ակնթարթային փոփոխությունները, ազատվելու ավելորդ դետալներից և վերարտադրելու տվյալ հատվածի հիմնական ու բնորոշ ուրվագծերը: Այստեղ տեղին է մեջբերել մեր համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում դասավանդած, այլ երախտաշատների՝ պրեֆեսոր Ս. Թերզյանի և դոցենտ Հ. Մուրադյանի խոսքը. «Պլեներային աշխատանքների կատարման ընթացքում իրենց հաստատուն տեղն ունեն ճեպանկարները, որոնք ուսումնական որոշ խնդիրների լուծման ժամանակ որոշիչ դեր են խաղում… Չնայած այն բանին, որ ճեպանկարի կատարումը սերտորեն կապված է բնության մասնիկների և համաչափությունների մեխանիկական փոխանցման հետ թղթին, այն ենթադրում է կերպարային ընդհանրացումներ, որոնք հնարավորություն են տալիս կատարելու բնության տիպական գծերի և ծավալների համաչափ կոմպոզիցիոն լուծումներ»[8]:

---

[7] Լինում են վարժություններ, որտեղ ուսանողը ճեպանկարի վրա կարող է աշխատել քսանից մինչ երեսուն րոպե: Այստեղ արդեն հնարավոր է A 4 չափի թուղթը փոխարինել ավելի մեծաչափով:

[8] Ս. Թերզյան, Հ. Մուրադյան, Գրաֆիկական և գեղանկարչական խնդիրները պլեներում, Եր., 1989, էջ 8:

Ավարտելով մեր խոսքը՝ հարկ ենք համարում նշել, որ միայն ավագ սերնդի արվեստագետ-մանկավարժների դասավանդման մեթոդների հենքի վրա կարելի է կատարելագործել նոր մեթոդներ, ստեղծել նորը՝ ժամանակի շնչին համահունչ ստեղծագործություններ: Հարություն Հովհաննիսյանը մնաց գրաֆիկայի բնագավառի այն վարպետը, որի թողած ավանդը վերը նշվածի հավաստի ապացույցն է:

Դ. Հովհաննիսյան

Նկարիչ-մանկավարժ Հարություն Հովհաննիսյանի ստեղծագործական գործունեությունը և ուսուցման մեթոդները

Ամփոփում

Հոդվածում, անդրադառնում ենք Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում երկարամյա դասախոսական գործունեություն ծավալած, նոր շարջանի հայ արվեստի լավագույն գրաֆիկներից մեկի Հարություն Հովհաննիսյանի ստեղծագործական գործունեությանը և դասավանդման մեթոդներին: Փորձառու արվեստագետը ապագա նկարիչ-մանկավարժների կայացման գործում հույժ կարևորություն է տվել ճեպանկարների կատարման առաջադրանքներին:

Նյութում խոսք է գնում ակադեմիական գծանկարի ուսուցման մասին, որին տիրապետելու համար անհրաժեշտ նախապայման է ճեպանկարների կատարումը: Մասնավորապես Կերպարվեստ մասնագիտությամբ սովորողների համար առաջ է բերվում Հարություն Հովհաննիսյանի ճեպանկարի կատարման հիմնական մեթոդները:

Д. Оганесян

Творческая деятельность и методы обучения художник-педагога Арутюна Ованнисяна

Резюме

В этой статье мы расскажем о творческой деятельности и методике преподавания Арутюна Ованнисяна, одного из лучших художников-графиков новой эпохи, который долгое время читал лекции в Армянском государственном педагогическом университете им. Хачатура Абовяна. Опытный художник придает большое значение работе по созданию эскизов.

В статье рассматривается преподавание академического рисунка, что является обязательным условием для освоения рисунка. В частности, для студентов изобразительного искусства представлены основные методы исполнения эскизов Арутюна Ованнисяна.

D. Hovhannisyan

Artist-pedagogue Harutyun Hovhannisyan's creative activity and teaching methods

Summary

In this article, we cover the creative activity and teaching methods of Harutyun Hovhannisyan, one of the best graphic artists of the new era, who has been a long-time lecturer at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. The experienced artist has given great importance to the work of making the sketches.

The article deals with the teaching of academic drawing which is a prerequisite for mastering the drawing. For the students of fine arts in particular, the main methods of performing Harutyun Hovhannisyan's sketches are presented.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19